Տարվա լավագույն մարզչի քվեարկության կարգ

1. «Տարվա լավագույն մարզիչ» անվանակարգում քվեարկության իրավունք ունեն

1. ԶԼՄ-ների ներկայացուցիչները և ՀՀ ֆուտզալի Բարձրագույն խմբի ակումբները

2. «Տարվա լավագույն մարզիչ» անվանակարգում հաղթողի կոչմանը կարող են հավակնել օրացուցային տարվա ընթացքում Հայաստանի ազգային հավաքականը, ինչպես նաև Հայաստանի ֆուտզալի Բարձրագույն խմբի թիմերը գլխավորած մարզիչները (ներառյալ այն մարզիչները, ովքեր տարվա ընթացքում գլխավորել են մի քանի հավաքականներ կամ ակումբներ, կամ այլևս չեն հանդիսանում որևէ ակումբի գլխավոր մարզիչ):

3. Քվեարկողներին առաջարկվում է վերը նշված սկզբունքով կազմված մարզիչների ցուցակը, որոնցից պետք է ընտրել լավագույն երեքին:

Ակումբների ներկայացուցիչները չեն կարող քվեարկել մրցաշրջանի ընթացքում/տվյալ պահին իրենց ակումբը ներկայացրած/ներկայացնող թեկնածուի օգտին: Քվեարկությունը պետք է ուղարկել thebest@ffa.am էլհասցեին՝ նշելով քվեարկության տարբերակը, անուն-ազգանուն, լրատվամիջոցի անուն, կցելով լրագրողական բեյջը և լուսանկարը:

4. Միավորների հաշվառումը կատարվում է ՀՖՖ Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից՝ հետևյալ կարգով. 1-ին տեղ՝ 5 միավոր, 2-րդ տեղ՝ 3 միավոր, 3-րդ տեղ՝ 1 միավոր:

5. Տարվա լավագույն մարզիչը պարգևատրվում է 1 միլիոն ՀՀ դրամով և հուշանվերով: